

ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՐԲ

Գործ Աստուածաբանութեան դոկտոր աւագ—սարկաւագ

Ֆարրարի

Անգլիացի աստուածաբան Ֆարրար արդէն յայտնի է ամբողջ աշխարհին իւր եղական վաստակներովը: Նորա «Աեանք և վաստակք Ս. Պօղոս առաքելոյ» և «Աեանք Յիսուսի Քրիստոսի» մեծահատոր հեղինակութիւնները, որոնք ներկայացնում են ընթերցողներին առաքելական դարի պատմութեան ուսումնասիրութիւնը այնպիսի հասուն խորհրդածութեամբ, այնպիսի գրաւիչ ոճով, որ միապէս արժանաւոր գնահատութիւն և հռչակ են ստացել ամենքից առ հասարակ, ամենալաւ առհաւատչեան են Ֆարրարի միւս երկերի պիտանաւորութեանը:

Ինչպէս ուրիշ թարգմանիչն առնելով հեղինակի յառաջարանից ասում է՝ Ֆարրարի երկասիրութիւնները պատահական դէպքերի արդիւնք չեն, այլ մէկը միւսի շարունակութիւնը: Ֆարրարի պէս գիտուն և եկեղեցու եռանդուն պաշտօնեան տեսնելով այն անտարբերութիւնը դէպի կրօն և եկեղեցին, չէր կարող անտարբեր մնալ և ինքն. ուստի և մարդկութեանը տալով առաքելական դարի պատմութեան ուսումնասիրութիւնը, մի եղական գործ, որ կարող էր շարժել և մտածութեան նիւթ ու փրկարար ազդեցութիւն գործել ընթերցողների վերայ, իբրև շարունակութիւն՝ տալիս է և եկեղեցւոյ չորրորդ դարու նշանաւոր հայրերի և ուսուցիչների կենսագրութեան ուսումնասիրութիւնը, որով քաջ իսկ պատկերացնելով ժամանակի ոգին, դէպքերը, եկեղեցւոյ վիճակը, և եկեղեցական հայրերի գործունէութեան եղանակը, պայծառ լուսով լուսաւորում է մտքերը՝ ըմբռնելու քրիստոնէութեան այն փրկարար ազդեցութիւնը, որով աշխարհ բոլորովին կերպարանափոխուեց. իսկ այդ ազդեցութիւնը, դարերի ընթացքում՝ զանազան փորձերի ենթարկուելով ոչ միայն չը թուլացաւ, այլ աւելի ևս ոյժ և հաստատութիւն ստացաւ:

Ֆարրարի վաստակների ուրիշ թարգմանիչ Ա. Պ. Լոպուխինը «Եկեղեցւոյ տիեզերական հարբ» վերնագրով վաստակի յառաջարանի մէջ գանգատում է ուսանների դանդաղկոտութեան համար, որ չեն կարողանում Արեւմուտքի կրօնական բարոյական գրականութեան արագութեամբ յառաջ ընթացող հոսանքին հետևել, Եթէ նա աչքի առաջ ունենալով իւր ազգի կրօնական համեմատաբար հարուստ գրականութիւնը, որ դեռ հարստա-

նում է ինքնուրոյն և թարգմանական ընտիր երկերով, գանգատում է, որչափ պէտք է մեզ գանգատել մեր ազգի արդի կացութեան մէջ, որ համարուելով կրօնական ազգ՝ տարի է անցնում և չենք ունենում ինքնուրոյն կամ թարգմանական մի գիրք բարեխղճութեամբ և հասուն խորհրդածութեամբ կազմած, որ բաւականութիւն տար ըստ մասին մեր՝ կրօնի գիտութեանը ծարաւի մտքերին, եւ չեմ խօսում դասագրքերի մասին:

Ատարեալ սով է Հայ գրականութեան մէջ եկեղեցական պատմութեան ուսումնասիրութեան, Ս. Գրքի գիտութեան և կրօնագիտութեան վերաբերեալ գրքերի: Մնում է մեզ այդ մասին մեր պասքը լցնել օտար գրականութիւնից, որին շատ շատերս բաւական չենք, լեզու չիմանալով:

Փարրարի նշանաւոր վաստակների մասին մի ճաշակ կամենալով տալ Հայ ընթերցողներին՝ 1889 թուի դեկտեմբերից սկսեալ պարբերաբար ռուս «Странникъ» կրօնական ամսաթերթում տպուող «Եկեղեցու Տիեզերական Հարք» վերնագրով գործը թարգմանեցինք:

Փարրարի երկերը թարգմանելու համար հարկաւոր էր մեծ պատրաստութիւն, և արժէր անգլիերէն գիտենալ, բնագրից թարգմանելու համար՝ իսկ մենք ձեռնամուխ եղանք ոչ թէ մեր ոյժերի վերայ վստահելով, այլ բուն ցանկութիւնից առաջնորդուելով, ուստի և ներումն ենք խնդրում ընթերցողներից նկատելի պակասութեանց համար, որովհետեւ եղածը մի ճաշակ է և առաջին փորձ: Արդէն ռուս թարգմանութեան մէջ հեղինակի ազդու ոճը բաւական պէտք է թուլացած համարենք, իսկ հայերէնում՝ աւելի ևս, որովհետեւ շատ դժուար է մի լեզուի ոճի ներդրութիւնը մի ուրիշ լեզուով թարգմանութեան մէջ անաղարտ պահել:

Յ. վարդապետ Մովսիսեան

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՋԱՅԻ

(ՔԱՐՐԱՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՀԱՐԱԴՐՈՒԹԻՒՆԻՅ).

(Ռուսերէնից)

«Այնքան ընդհանուր և խոր խորհիւն. ո՛վ Գրիգոր, համարէ՛մ դուք բերան բլբլաւով:»

Բարսեղ:

I. ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻ

Նազիանդ քաղաքը իւր հռչակով պարտական է եկեղեցու այն մեծ և ճարտարաբան հօր հետը ունեցած կապին՝ որին իւր անունը